ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/108

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանության ներկայացուցիչներ՝ Ա. Կոթողյանի, Ռ. Կարապետյանի, Ա. Չերքեզյանի,
Մասնակից՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ 26/26-1/11059-2019 գրությամբ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 28.06.2019թ. թիվ 01.3/15984-19 գրության հիման վրա, 02.07.2019թ. «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ոստիկանությունը 28.06.2019թ. թիվ 01.3/15984-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 45-րդ կետի համաձայն, Ձեզ է ուղարկվում ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52 ծածկագրով գնման ընթացակարգի և ընթացակարգին հայտ ներկայացրած Բիլլ Սթոուն ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, քանի որ Բիլլ Սթոուն ՍՊԸ-ի կողմից « Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացվել են իրականությանը չհամապատասխանող փաստթղթեր:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի անհրաժեշտ փաստաթղթերը:

3. **<u>«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 04.07.2019թ.-ին գրությամբ դիմել է «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ

26/26-1/11059-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացնալով նշանակված նիստերին, ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից վերջինիս կարիքների համար տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշների պատրաստման աշխատանքների կատարման ձեռք բերման նպատակով հայտարարվել է "ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52" ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցության հայտ են տվել երկու ընկերություն՝ <Բիլլ Սթոուն> ՍՊ ընկերությունը և <Զնակ ստանդարտ> ՍՊ ընկերությունը: Վերջինս գնմանը մասնակցել է կոնսորցիումով՝ <Տիպոգրաֆիա No 2> ՍՊԸ-ի հետ միասին:

Թիվ ՍՑ-ԼՕ-2019/108 ընթացակարգի հիմքերի քննության վերաբերյալ 19.07.2019թ. տեղի ունեցած նիստի ընթացքում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից հարց ուղվեց ՀՀ ԿԱ ոստիկանության ներկայացուցչին՝ թե վերջ ի վերջո ինչ փաստաթուղթ է պահանջվել գնահատող հանձնաժողովի կողմից, որին ի պատասխան այդպես էլ չտրվեց հստակ պատասխան՝ մշտապես հղում անելով <Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին> ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի <թ> պարբերությանը;

Վերը նշված հարցի հետ կապված հայտնում ենք, որ "ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52" ծածկագրով հրատապ բաց մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի 21.06.2019թ-ի թիվ 2 արձանագրության սահմանվել է, որ <Բիլլ Սթոուն> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելվածի 2.1-ի (մասնակցի իրական շահառուների մասին տվյալներ) տվյալները ներկայացվել են <Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին> ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի <թ> պարբերության պահանջների խախտմամբ, համաձայն որի մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող

ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

Նշվածից հետո հետևել է ՀՀ ԿԱ ոստիկանության պահանջը «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ից ներկայացնելու տեղեկություններ Ընկերության ֆիզիկական անձ համարվող շահառուների մասին տեղեկություններ:

Այնուհետև "ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52" ծածկագրով հրատապ բաց մրցույթի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի 25.06.2019թ-ի թիվ 3 արձանագրությամբ որոշվել է "ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52" ծածկագրով ընթացակարգին առաջին տեղ զբաղեցրած ճանաչել <Զնակ Ստանդարտ> ՍՊԸ-ին, ով մասնակցել է կոնսորցիումով <Տիպոգրաֆիա N2> ՍՊԸ-ի հետ:

Գտնում ենք, որ վերոհիշյալ որոշումն անվավեր է, քանի որ այն չի բխել ինչպես <Գնումների մասին> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի, այնպես էլ ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի <թ> կետի դրույթներից ներքոհիշյալ հիմնավորումներով և պատճառաբանությամբ:

<Գնումների մասին> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետով /այդ թվում՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի <թ> կետով/ սահմանվում է, որ հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, որը (որոնք) ուղղակի կամ անուղղակի ունի գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի, քան 10 տոկոսը, ներառյալ՝ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց), որը (որոնք) իրավունք ունի (ունեն) նշանակելու կամ ազատելու մասնակցող իրավաբանական անձի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է այդ իրավաբանական անձի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի 15 տոկոսից ավելին, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն ենթակետով նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

*Նորմի կիրառման համար օրենսդիրը սահմանել է երկու իրարից անկախ պայմաններ, որոնք իրարից տարանջատված են **<կամ>** շաղկապով:*

Համաձայն <Նորմատիվ իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի

Նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի կամ թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը, եթե իրավական ակտում՝

1) նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, կամ

2) նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով և «կամ» շաղկապով բաժանված պայմաններով:

*Տվյալ դեպքում <Գնումների մասին> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետում **< ... այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, որը (որոնք) ուղղակի կամ անուղղակի ունի գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի, քան 10 տոկոսը, ներառյալ՝ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը ... >** պայմանը տարանջատված է **< ...այն անձի (անձանց), որը (որոնք) իրավունք ունի (ունեն) նշանակելու կամ ազատելու մասնակցող իրավաբանական անձի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է այդ իրավաբանական անձի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի 15 տոկոսից ավելին ... >** պայմանից ինչպես ստորակետով այնպես էլ **<Կամ>** շաղկապով, այսինքն այս պարագայում գործում է <Նորմատիվ իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը:*

<Գնումների մասին> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում նշվածը երկու պայմանների ընտրության հայեցողություն է նախատեսվում, և հետևաբար նշված պայմաններից մեկի կիրառումն էլ բավարար և անհրաժեշտ պայման է հավաստելու, որ պահպանված են <Գնումների մասին> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետով սահմանված պահանջները:

Ընդ որում, տառացի մեկնաբանության դեպքում ունենք հետևյալ պատկերը.

<Բիլլ Սթոուն> ՍՊԸ-ի մասնակիցները իրավաբանական անձինք են, մասնավորապես,

1. Ապլաս Ինտերնացիոնալ Հոլդինգ AG ընկերությունը,

2. Արտ-Լար ֆինանս ընդ ըքաունթինգ ՍՊ ընկերությունը:

<Բիլլ Սթոուն> ՍՊԸ-ի հայտում ներկայացված են հիշյալ իրավաբանական անձանց տվյալները, հետևաբար պնդումն առ այն, որ <Բիլլ Սթոուն> ՍՊԸ-ի տրամադրած տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, այն է՝ բացակայում են իրական շահառուները, անհիմն է:

Ավելին, համաձայն <Նորմատիվ իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 41 հոդվածի 1-ին մասի Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, իսկ <Գնումների մասին> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետի տառացի մեկնաբանության պարագայում ստացվում է հետևյալը, որ

1. <Բիլլ Սթոուն> ՍՊ ընկերությունը չունի ֆիզիկական անձ մասնակից, որը կտիրապետեր <Բիլլ Սթոուն> ՍՊԸ-ի բաժնեմասի 10 տոկոսը (թեև հոդվածում խոսքը գնում է բաժնետիրական ընկերությունների մասով), հետևաբար, <Բիլլ Սթոուն> ՍՊ ընկերությունը պարտավոր չէր ներկայացնելու ֆիզիկական անձի որևէ տվյալի որպես իրական շահառուի, ուստի չպետք է կիրառվի <Գնումների մասին> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետում նշված 1-ին պայմանը, այն է՝ ***< ... այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, որը (որոնք) ուղղակի կամ անուղղակի ունի գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի, քան 10 տոկոսը, ներառյալ՝ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը ... >***

2. <Բիլլ Սթոուն> ՍՊԸ-ի գործադիր մարմնի անդամներին նշանակելու և ազատելու իրավունք ունեն երկու ընկերություններ՝ Ապլաս Ինտերնացիոնալ Հոլդինգ AG ընկերությունը և Արտ-Լար ֆինանս ընդ ըքաունթինգ ՍՊ ընկերությունը,

3. Եվ վերջապես, <Բիլլ Սթոուն>ՍՊԸ-ի, որպես գնումներին մասնակցող իրավաբանական անձի, վերջինիս_կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի 15 տոկոսից ավելին ստանալու իրավունքը ևս պատկանում է երկու իրավաբանական, այլ ոչ թե ֆիզկական, անձանց, այն է՝ ***Ապլաս Ինտերնացիոնալ Հոլդինգ AG ընկերությանը և Արտ-Լար ֆինանս ընդ ըքաունթինգ ՍՊ ընկերությանը,*** ինչն էլ ներկայացվել է գնման հայտով:

Ինչ վերաբերում է <Բիլլ Սթոուն> ՍՊԸ-ի կողմից փաստաթղթի Screenshot (հեռախոսի էկրանի հանույթի տարբերակով) տեսքով ներկայացմանը, ապա պետք է նշել, որ օրենքով ներկայացման ձևի հարցում կոնկրետ սահմանում չկա, այլ օրենսդիրը սահմանել է ներկայացնելու պարտականություն, ինչն էլ փաստացի ֆիզիկապես կատարվել է Ընկերության կողմից:

Համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի Վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում, ավելին, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե անձանց կողմից վարչական մարմիններ ներկայացված փաստաթղթերը (տվյալները, տեղեկությունները) իրենց մեջ բովանդակային առումով ներառում են անհրաժեշտ այլ փաստաթղթերի բովանդակություն, ապա վերջիններս այլևս չեն կարող պահանջվել լրացուցիչ կամ առանձնացված ձևով: Հետևաբար Screenshot տարբերակով փաստաթղթի ներկայացված լինելու հանգամանքն արդեն իսկ վկայում է այն մասին, որ ընկերությունը կատարել է օրենքով իր վրա դրված պահանջը, ընդ որում, screenshot արված տարբերակում ակնհայտ երևում է էլեկտրոնային ստորագրության մակնշումը:

Իսկ եթե վարչական մարմինը կասկածներ ունի ներկայացված փաստաթղթի հավաստիության վերաբերյալ, ապա այս պարագայում օգնության է գալիս <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, ըստ որի Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Ոստիկանությունը որպես վարչական մարմնի այս մասով թերևս անգործություն է ցուցաբերել, առավել ևս որ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունում նրա համար հստակ պարտականություն է սահմանված եղել առ այն, որ եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության

վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

Վերոգրյալի հիմնավորմամբ, գտնում ենք, որ ընկերությունը թույլ չի տվել <Գնումների մասին> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետով /այդ թվում՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի <թ> կետով/ սահմանված պահանջների խախտումներ, իսկ գնահատող հանձնաժողովի օրենքի՝ <Գնումների մասին> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետի /այդ թվում՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի <թ> կետի առկա մեկնաբանությամբ կիրառումը սխալ է, հետևաբար այն ոչ միայն խախտում է դիմողիս իրավունքները, այլ նաև պետության՝ արդյունավետ գնումներ իրականացնելու իրավունքը, մասնավորապես, նման իրավիճակում ստեղծվում է տպավորություն, որ ՀՀ ոստիկանությունը ամեն գնով փորձում է հովանավորել վերոհիշյալ դաշտում նոր երևան եկած մասնակցին՝ "Զնակ Ստանդարտ" ՍՊԸ-ին: Սակայն խնդիրը կայանում է նրանում, որ նման հովանավորության արդյունքում ապօրինի մերժվում է «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտը և պետությունը ստիպված կլինի կնքել պայմանագիր "Զնակ Ստանդարտ" ՍՊԸ-ի հետ, ում գնային առաջարկը մոտ 17 մլն. դրամով ավելի թանկ է, քան «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը: Մինչդեռ պետության կայացման համար նման կարևորագույն փուլում, գտնում ենք, անթույլատրելի է ՀՀ պետական բյուջեից մոտ 17 մլն ՀՀ դրամի անհիմն վատնումը:

Համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա/ կետի անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի, տվյալ դեպքում՝ <Գնումների մասին> ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետի /այդ թվում՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի <թ> կետով/ սահմանված պահանջների սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Թիվ ՍՑ-ԼՕ-2019/108 ընթացակարգի հիմքերի քննության վերաբերյալ 19.07.2019թ. տեղի ունեցած նիստի ընթացքում ՀՀ ԿԱ ոստիկանության մեկ այլ ներկայացուցչը խնդրեց, որպեսզի բողոքներ քննող անձ Լ.Օհանյանը ուշադրություն դարձնի նաև այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի քարտուղարի կողմից զանգ է կատարվել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի տնօրեն Դ. Իսրայելյանին և պարզաբանվել թե ինչ շտկում պետք է կատարվի:

Վերը նշված հանգամանքի հետ կապված հայտնում ենք, որ ՀՀ ԿԱ ոստիկանությունը ինքն իր գործողություններով կարծես թե փաստում է, որ այնպիսի շտկման պահանջ է ներկայարել, որ կարիք է համարել ինքնակամ զանգահարել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի տնօրեն Դ. Իսրայելյանին և ներկայացրել պարզաբանում /մինչդեռ այդպիսի ջերմ վերաբերմունքի ընկերությունը երբեք չի հանդիպել ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից/ և որ ամենակարևորն է շտկման ծանուցմամբ հրավերի պահանջներին նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը կամ անհմապատասխանությունները պետք է այնքան հստակ նշվեն, որպեսզի կարիք չլինի հեռախոսազանգի միջոցով զանգել և պարզաբանել, մինչդեռ շտկման ծանուցմամբ նշվել է, որ <Բիլլ Սթոուն> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելվածի 2.1-ի (մասնակցի իրական շահառուների մասին տվյալներ) տվյալները ներկայացվել են <Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին> ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի <թ> պարբերության պահանջների խախտմամբ, համաձայն որի մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նորմատիվ իրավական ակտում թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, ապա չի կարող կիրառվել «կամ» շաղկապը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի կամ թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը, եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի <<թ>> պարբերության համաձայն՝

մասնակիցը հայտով ներկայացնում է այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Վերոհիշյալ նորմի բովանդակությունից՝ հաշվի առնելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի պահանջները, պարզ է դառնում, որ մասնակիցը կարող է ներկայացնել հետևյալ տեղեկատվությունից որևիցե մեկը / թվարկված բոլոր պայմանների առկայությունը միաժամանակ պարտադիր չէ/

1. այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը.

2. կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին

3. կամ այն անձի (անձանց) տվյալները, ով ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին:

Ընդ որում, հաշվի առնելով, որ թվարկված առաջին պայմանում հստակ հղում է առկա ֆիզիկական անձի վրա, իսկ մյուս երկու պայմաններում նշված է միայն <<անձ>> եզրույթը, վերոհիշյալից ակնհայտ է դառնում, որ խոսքը գնում է թե՛ ֆիզիկական և թե՛ իրավաբանական անձանց մասին:

Տեղեկացնում ենք, որ վիճարկվող ընթացակարգով «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի <<թ>> պարբերությամբ նախատեսված հետևյալ տեղեկատվությունը՝ կամ այն անձի (անձանց) տվյալները, ով ստանում է

մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին:

Այդպիսի անձինք (իրավաբանական) հանդիսացել են «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն հիմնադիր՝ իրական շահառուներ՝ ԱՏԼԱՍ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՀՈԼԴԻՆԳ AG (70%) և ԱՐՏ-ԼԱՐ ՖԻՆԱՆՍ ԸՆԴ ԸՔԱՈՒՆԹԻՆԳ ՍՊԸ-ն:

Թիվ ՍՑ-ԼՕ-2019/108 ընթացակարգի հիմքերի քննության վերաբերյալ 19.07.2019թ. տեղի ունեցած նիստի ընթացքում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից հարց ուղվեց ՀՀ ԿԱ ոստիկանության ներկայացուցչին՝ թե նախկինում «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն մասնակցություն ունեցել է ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից հայտարարված մրցույթներին, որին ի պատասխան ստացվել է պատասխան, որ ***չենք հիշում, կարծես թե 1 անգամ է մասնակցել և որ գտնում ենք, որ այդ հարցը կապ չունի սույն ընթացակարգի քննության հետ :***

Վերը նշված փաստական հանգամանքի հետ կապված գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն տարիներ ի վեր, այդ թվում նաև 2018-2019թթ., մասնակցել է ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպված բազմաթիվ պետական գնման ընթացակարգերի և ներկայացրել իր իրական շահառուների մասին հենց այսպիսի տեղեկություններ, և մինչ օրս Ընկերությունից երբևիցե չի պահանջվել ներկայացնել տեղեկատվություն ֆիզիկական անձ՝ շահառուի մասին, քանզի վերջինս բացակայում է:

Ավելին, ***օրինակ 2019թ. կայացած թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ԳՐԵՆԱԿԱՆ/2019/4 ծածկագրով մրցույթով «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է իր իրական շահառուների մասին հենց այսպիսի տեղեկություններ, և Ընկերության հետ կնքվել է պայմանագիր****:*

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում մեկ այլ կարևոր հանգամանքի վրա, այն է՝ ս.թ. «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից տրանսպորտային միջոցներին հատկացվող հաշվառման վկայագրերի անձնավորեցման համար պլաստիկ քարտերի և օժանդակ պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված "ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019" ծածկագրով հրատապ բաց մրցույթին՝ ներկայացնելով նույնատիպ Հավելված 2.1, որը գնահատող հանձնաժողովի կողմից 05.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2

արձանագրությամբ գնահատվել է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան /արձանագրությունը կցվում է/:

Վերը նշված փաստերից հետևում է, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն մշտապես ներկայացրել է Հավելված 2.1-ը՝ այն տեսքով, որը ներկայացվել է նաև "ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52" ծածկագրով հրատապ բաց մրցույթին և բոլոր դեպքերում այն գնահատվել է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացի "ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52" ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից:

Պարոն Լ. Օհանյանին խնդրում ենք նաև ուշադրություն դարձնել թե "ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52" և թե "ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019" ծածկագրով հրատապ բաց մրցույթների գնահատող հանձնաժողովների անդամներին և գնահատող հանձնաժողովի նախագահին, որոնք նույնն են՝ սակայն տարբեր մրցույթների շրջանակներում Հավելված 2.1 տարբեր կերպ են գնահատում:»:

Ի լրումն «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու նպատակով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի վարույթում նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/108 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացված դիրքորոշման, Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ "ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52" ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 25.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը բողոքարկվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի վարույթում /բողոքի ծածկագիր թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/48/, որի վերաբերյալ Գ. Ներսիսյանը 01.08.2019թ. կայացրել է որոշում, որով որոշել է բողոքը բավարարել և ***պարտավորեցվել է "ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52" ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել գնահատող հանձնաժողովի 25.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրած «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:***

Հայտնում ենք, որ թիվ ՍՑ-ԼՕ-2019/108 ընթացակարգը նախաձեռնվել է "ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52" ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 25.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝

«Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասով, մինչդեռ ինչպես հայտնել ենք մրցույթի գնահատող հանձնաժողովի վերոնշված որոշումը վիճարկվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանի վարույթում նախաձեռնված բողոքով, որին տրվել է թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/48 ծածկագիրը և որի վերաբերյալ 01.08.2019թ. կայացվել է որոշում՝ որով ***Գ. Ներսիսյանը որոշել է պարտավորեցնել "ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52" ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել գնահատող հանձնաժողովի 25.06.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրած «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:***

Այլ կերպ ասած, արդեն իսկ բացակայում է, դադարել է այդ հիմքով "ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52" ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:»:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձին խնդրել են հաշվի առնել ներկայացված փաստերը ու փաստական հանգամանքները և «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2019/108 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ ոստիկանության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) կարիքների համար տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշների պատրաստման աշխատանքների կատարման ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2.1-ի

(մասնակցի իրական շահառուների մասին տվյալներ), ներկայացվել է «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության պահանջների խախտմամբ, այն է՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

Նույն արձանագրությամբ հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջները, որոշել է նիստը կասեցնել 1 /մեկ/ աշխատանքային օրով /մինչև 24.06.2019թ.-ի աշխատանքային օրվա ավարտը/ և «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին ծանուցել ներկայացնելու «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 3-րդ կետում նշված անհամապատասխանության շտկումը:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 25.06.2019թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 21.06.2019թ.-ին «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52» ծածկագրով ընթացակարգի նիստում «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին տրվել էր մեկ աշխատանքային օր իր կողմից ներկայացված Հավելված 2.1-ի (մասնակցի իրական շահառուների մասին տվյալներ) շտկման համար, որը ներկայացվել էր «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության պահանջների խախտմամբ:

24.06.2019թ.-ին «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից policetv.gnumner@mail.ru էլեկտրոնային փոստին ուղարկվել է Հավելված 2.1-ի շտկման 1-ին և 2-րդ տարբերակը հեռախոսի էկրանի հանույթի (screenshot) տարբերակով, որը չի կարող համարվել օրինական, քանի ուղարկված է նկարի միջոցով և հնարավոր չէ ստուգել էլեկտրոնային

ստորագրության իսկությունը: Բացի այդ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի տրամադրված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը /բացակայում են իրական շահառուները/:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությունը և ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից 17.06.2019թ.-ին ստացած թիվ ՖՆ/59497-19 գրությունը, որոշել է մերժել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտը:

Մասնակցի կողմից, մասնակցության հայտի հետ միաժամանակ, Մրցույթի գնահատող հանձնաժողովին է ներկայացվել «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի մասնակցի իրական շահառուների մասին տվյալները պարունակող հավելված 2.1-ը (այսուհետ՝ Հավելված 2.1), որում առկա են ԱՏԼԱՍ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՀՈԼԴԻՆԳ AG և ԱՐՏ-ԼԱՐ ՖԻՆԱՆՍ ԸՆԴ ԸՔԱՈԻՆԹԻՆԳ ՍՊ ընկերությունների տվյալները՝ որպես մասնակցի իրական շահառուների տվյալ:

24.06.2019թ.-ին «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից policetv.gnumner@mail.ru էլեկտրոնային փոստին ուղարկվել է Հավելված 2.1-ի շտկված տարբերակը, որում առկա է Իսրայեյյան Դավիթ Սերգեյի տվյալը՝ որպես մասնակցի իրական շահառուի տվյալ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ 26/26-1/11059-2019 գրությամբ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի.

Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ներկայացնի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ

ՀՀ ոստիկանության կարիքների համար տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշների պատրաստման աշխատանքների կատարման ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն:

Մրցույթի գնահատող հանձնաժողովն իր 21.06.2019թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ գտել է, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 2.1-ի (մասնակցի իրական շահառուների մասին տվյալներ), ներկայացվել է «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության պահանջների խախտմամբ:

Նույն արձանագրությամբ հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջները, որոշել է նիստը կասեցնել 1 /մեկ/ աշխատանքային օրով /մինչև 24.06.2019թ.-ի աշխատանքային օրվա ավարտը/ և «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին ծանուցել ներկայացնելու «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 3-րդ կետում նշված անհամապատասխանության շտկումը:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 25.06.2019թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 21.06.2019թ.-ին «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52» ծածկագրով ընթացակարգի նիստում «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին տրվել էր մեկ աշխատանքային օր իր կողմից ներկայացված Հավելված 2.1-ի (մասնակցի իրական շահառուների մասին տվյալներ) շտկման համար, որը ներկայացվել էր «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության պահանջների խախտմամբ:

24.06.2019թ.-ին «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից policetv.gnumner@mail.ru էլեկտրոնային փոստին ուղարկվել է Հավելված 2.1-ի շտկման 1-ին և 2-րդ տարբերակը հեռախոսի էկրանի հանույթի (screenshot) տարբերակով, որը չի կարող համարվել օրինական, քանի ուղարկված է նկարի միջոցով և հնարավոր չէ ստուգել էլեկտրոնային ստորագրության իսկությունը: Բացի այդ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի տրամադրված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը /բացակայում են իրական շահառուները/:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությունը և ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից 17.06.2019թ.-ին ստացած թիվ ՖՆ/59497-19 գրությունը, որոշել է մերժել «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի հայտը:

Մասնակցի կողմից, մասնակցության հայտի հետ միաժամանակ, Մրցույթի գնահատող հանձնաժողովին է ներկայացվել «ՀՀ Ո ՀԲՄԱՇՁԲ-ՀԱՄ-2019/Ա-52» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի մասնակցի իրական շահառուների մասին տվյալները պարունակող հավելված 2.1-ը (այսուհետ՝ Հավելված 2.1), որում առկա են ԱՏԼԱՍ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՀՈԼԴԻՆԳ AG և ԱՐՏ-ԼԱՐ ՖԻՆԱՆՍ ԸՆԴ ԸՔԱՈԻՆԹԻՆԳ ՍՊ ընկերությունների տվյալները՝ որպես մասնակցի իրական շահառուների տվյալ:

24.06.2019թ.-ին «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից policetv.gnumner@mail.ru էլեկտրոնային փոստին ուղարկվել է Հավելված 2.1-ի շտկված տարբերակը, որում առկա է Իսրայեյյան Դավիթ Սերգեյի տվյալը՝ որպես մասնակցի իրական շահառուի տվյալ:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ Հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, որը (որոնք) ուղղակի կամ անուղղակի ունի գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի ավելի, քան 10 տոկոսը, ներառյալ՝ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց), որը (որոնք) իրավունք ունի (ունեն) նշանակելու կամ ազատելու մասնակցող իրավաբանական անձի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է այդ իրավաբանական անձի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի 15 տոկոսից ավելին, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն ենթակետով նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական

կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է մասնակցի իրական շահառուների տվյալների մասին հայտարարություն /թիվ 2.1 հավելված/ (այսուհետ՝ Հայտարարություն): Հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է: Այս պարագայում, արձանագրված անհամապատասխա-

նությունը չշտկելու հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում և նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը: Սակայն տվյալ պարագայում, քանի որ Մասնակիցն իր կողմից ձեռնարկել է հնարավոր բոլոր գործողություններն՝ ուղղված գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկմանը, այն է՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկել Հավելված 2.1-ի շտկված տարբերակը, չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը կհանգեցներ Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ուստի նման պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, գնահատող հանձնաժողովի քարտուղարին ուղարկելով Հավելված 2.1-ի շտկված տարբերակը՝ չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ կարող էր հանգեցնել գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ավելին՝ գնահատող հանձնաժողովը «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին Հավելված 2.1-ի շտկման հնարավորություն առաջարկելով, խախտել է Կարգի 46-րդ կետի դրույթները (անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները), չի նշել, թե կոնկրետ ինչը չի համապատասխանում Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.07.2019թ. թիվ 26/26-1/11059-2019 գրությամբ «Բիլլ Սթոուն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**